Ենթակառուցվածքներ. հետպատերազմյան Արցախում կյանքի վերակազմակերպման առաջնահերթությունները

Համառոտագիր

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

Կորուստները ենթակառուցածքներում

Պատերազմի հետևանքները բազմաշերտ ու բազմամակարդակ են և դեռ ավելի ու ավելի շատ են ի հայտ գալու ժամանակի ընթացքում: Ներկա իրավիճակում բազմաթիվ հրատապ խնդիրներ են առաջ եկել տնտեսության, պետական և համայնքային կառավարման ոլորտներում:

Առաջնահերթությունների թվում ենթակառուցվածքային խնդիրներն են: Ջրային և էներգետիկ համակարգերի ավելի քան 90 տոկոսը հայտնվել է հակառակորդի իրավազորության ներքո: Խոսքը այն գետերի մասին է, որոնց վրա կառուցված են եղել ՀԷԿ-երը: Այսօր հիդրոէներգետիկ համակարգեր փաստացի հնարավոր է զարգացնել միայն Թարթառ գետի վրա. դրանք նախագծված էին, սակայն դեռևս իրականացված չէին: Խոսքը Սարսանգի ջրամբարից Մատաղիս հատվածի մասին է, որը փաստացի մեր վերահսկողության տակ է, սակայն խոչընդոտներ են առաջացել Մատաղիսի՝ հակառակորդի վերահսկողության տակ անցնելու հանգամանքով: Մնացած բոլոր տարածքները, որտեղ կային և հնարավոր էր կառուցել ՀԷԿ-եր, այլևս մեր տարածքները չեն: Թարթառ գետով էլ հոսում են հիմնականում մակերևութային ջրեր, որոնց ներուժը մեծապես կախված է տեղումներից:

Ձևավորված նոր աշխարհագրությունը նոր մարտահրավերներ է առաջ բերել գյուղատնտեսության ոլորտում. արցախի ոռոգման համակարգի ենթակառուցվածքների զգալի մասը ևս անցել է Ադրբեջանի վերահսկողության տակ: Կորսված հողային ռեսուրսների զուտ բացարձակ թիվն ամբողջությամբ չի արտացոլում գյուղատնտեսական այն պոտենցիալը, որը կորցրել ենք: Կորցրած հողերը եղել են ոռոգվող, դրանցում տարիներ շարունակ մեծ ներդրումներ են արվել: Արցախը զրկվել է 70-77 տոկոս այգիներից, վարելահողերից և ընդհանուր առմամբ՝ զարգացման հնարավորություններից: Ադրբեջանին անցած տարածքները հիմնականում հարթավայրային գոտում են, այնտեղ սեփականաշնորհված տարածքներ և պետական պահուստային ֆոնդերն էին, որ տրված էին վարձակալության: Մեր վերահսկողության տակ գտնվող հատվածում մասնատված հողակտորներ են, չկա կայուն ոռոգում, ավելին, չկա այն ապահովելու մեծ աղբյուր:

Անասնապահության առումով արոտավայրերի գերակշիռ մասը ևս անցել է Ադրբեջանի վերահսկողության տակ. 50 տոկոսից ավելին՝ Շահումյանի և Քաշաթաղի շրջաններում: Միայն Շահումյանում շուրջ 105 հազար հեկտար արոտավայր ենք կորցրել: Անտառային տնտեսության առումով ևս զգալի կորուստներ ունենք. կարևոր էին հատկապես բարձրարժեք անտառային հատվածները Հադրութի շրջանում: Բարձրլեռնային գոտու բնակիչների զգալի մասն իր եկամուտներն ապահովում էր փայտ մթերելով:

Խմելու ջրի հետ կապված էլ առաջացել են էական խնդիրներ: Ասկերանի վերին ենթաշրջանի համայնքներում և Քաշաթաղի շրջանում՝ հյուսիսային հատվածում, որոնք անցել են Ադրբեջանի վերահսկողության տակ, առկա են խմելու ջրի աղբյուրներ, որոնք ապահովում էին նշանակալի թվով համայնքների բնակչությանը: Այստեղ ոչ թե ռեսուրսն է պակասում, այլև խմելու ջուրն է դառնում վտանգավոր բնակչության առողջության համար: Օրինակ, Թաղավարդ համայնքում բնակիչներն արդեն իսկ հրաժարվել են ադրբեջանի հսկողության տակ գտնվող աղբյուրներից հոսող խմելու ջրից: Այլ աղբյուրներից են օգտվում: Նման համայնքներ շատ կան, և անհրաժեշտ է խմելու ջրի այլընտրանքային աղբյուրներ ապահովել:

Կապի բնագավառում էլ ունենք մեծ խնդիրներ: Մինչև պատերազմը, աշխարհագրորեն Ադրբեջանի տարածքից հեռու լինելու պատճառով, Արցախում առանց խնդիրների գործում էր տեղական բջջային կապը, հեռուստաալիքները: Ադրբեջանական կայանն այնքան հեռու էր, որ չէր խոչընդոտում այդ կապի հասանելիությանը: Այսօր իրավիճակն այլ է. Շուշիում Ադրբեջանը կտեղադրի ինտերնետ, բջջային կապի կայաններ և հեռուստաաշտարակներ: Հատկապես սուր խնդիրներ են առաջանալու բջջային կապի ապահովման հարցում, քանի որ Ադրբեջանը Շուշիում և Հադրութում տեղադրելու է 4G կայան և շատ արագ հավակնելու է զբաղեցնել Ղարաբաղ տելեկոմի կողմից չօգտագործվող հաճախականությունները: Ղարաբաղ տելեկոմը լրջագույն խնդիրների առաջ կանգնելու վտանգ ունի: Հայաստանի հետ կապ ունենալու ամենակարևոր հանգույցը միշտ եղել է Լիսագորի կայանը, որ մեր տարածքում է մնացել:

Երևան 0001
Սայաթ Նովա 19
Հեռ.՝ +374 10 582638
Ֆաքս՝ +374 10 527082

mail@ichd.org
www.ichd.org

Ինչ անել

Ակնհայտ է, որ հետպատերազմյան Արցախի տնտեսությունը, ենթակառուցվածքներն ու կյանքն ընդհանրապես հնարավոր չի լինելու վերականգնել նախապատերազմյան իրականության նախատիպով: Այնքան շատ բան է փոխվել-կորսվել, որ դա անել ուղղակի հնարավոր չի լինի: Ստեղծված իրավիճակում ամենամեծ սխալը կլիներ շարժվել կորցրածի խղճուկ նմանակի կայացման նպատակադրումներով. իսկ դա այդպես կլինի ինքնահոսով առաջ շարժվելու դեպքում: Լուծումը, թերևս, եղածի-մնացածի գույքագրմամբ, նոր նպատակադրումներով նոր տնտեսություն կառուցելու ճանապարհով շարժվելն է: Օրինակ, ակնհայտ է, որ նախկին գյուղատնտեսությունը նույնական կառուցվածքով ունենալ հնարավոր չէ, և ապագայում անհրաժեշտ է լինելու հենվել բարձր տեխնոլոգիաների վրա՝ կայացնելով կաթիլային ոռոգմամբ գերինտենսիվ արտադրություն: Նմանապես, նոր նպատակադրումներով նոր լուծումներ պետք է մշակվեն ենթակառուցվածքների ու տնտեսության մյուս ճյուղերի համար, գտնվեն մասնագիտացման նոր ոլորտներ, ինտեգրացիոն նոր սխեմաներ, նոր՝ սպեցիֆիկ շուկաներ:

Փյունիկի պես մոխրից հառնելու համար Արցախին անհրաժեշտ է նոր տնտեսության «ինժեներների» խումբ, ֆինանսավորման նոր աղբյուրներ հայթայթող բանակցողների թիմ, օրն ու գիշերն իրարից չտարբերող մենեջերների բանակ, և սեփական հողը կրկին անգամ ծաղկեցնելու տրամադրված աշխատասեր ժողովուրդ: Կա՛ լուծում, և լուծման ճանապարհի վիզուալիզացիան հենց սա է:

Համառոտագիրը մշակվել է 2020թ. դեկտեմբերի 11-ին կայացած՝ «Կյանքի և կենսագործունեության անվտանգությունը սահմանամերձ համայնքներում» խորագրով առանց հողամերի իրավունքի առցանց քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա: Կլոր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, քաղաքացիական հասարակության և միջազգային կառույցների ներկայացուցիչներ: